

ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

Մայիսի 15-ին Վաշինգտոնում մեծ շուքով տոնվ՝ց Ռուսաստանի քրիստոնեացման հազարամյակը:

ԱՄՆ-ի մայրաքաղաքի Ս. Նիքոլաս ռուսական եկեղեցում նույն առավոտ տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ և գոհաբանական մաղթանք, որին հաջորդեցին զանգակատան հիմնարկեքն ու ճաշկերույթը:

Ներկա էին 14 Եկեղեցիների ներկայացուցիչներ: Հայ Եկեղեցին ներկայացնում էր թեմական պատվիրակ գերշ. Տ. Բաբգեն եպս. Վարժապետյանը:

Նույն օրը, կեսօրից հետո, Եպիսկոպոսական եկեղեցու Մայր Տաճարում տեղի ունեցավ հազարամյակի պանծացման միջեկեղեցական էքումենիկ հանդիսավոր արարողություն՝ հազարավոր հանդիսականների ներկայությամբ:

Զույգ առիթներով, թեմական պատվիրակ սրբազանը արտահայտվեց ի դիմաց Հայաստանյայց Եկեղեցու և հայոց թեմին, հատկապես ընդգծելով Վսգգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի և Ռուս Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Պիմենի եղբայրական սերտ հարաբերությունները:

ԹՂԹԱԿԻՑ